# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 26-Ի N 954-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**«-----» ---------- 2024 թվականի N ------- Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 26-Ի N 954-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հուլիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում ներառված պետական ոչ առևտրային կազմակերպությունների ցանկը, դրանց տիպային (օրինակելի) կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի N 1474-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 954-Ն որոշման N 2 հավելվածը 14-րդ կետից հետո լրացնել նոր 14.1-ին կետով.

«14.1. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ին թույլատրել զբաղվելու նաև հետևյալ ձեռնարկատիրական գործունեության տեսակներով.

- ծաղիկների և բույսերի աճեցում, մանրածախ և մեծածախ վաճառք.
- ամանորի համար փշատերև ծառատեսակների աճեցում և վաճառք.
- տնկիների և այլ տնկանյութերի աճեցում և վաճառք.
- խաղողի այգիների հիմնում, ստացված խաղողից գինու արտադրություն և վաճառք.
- անտառային տնտեսության բնագավառում օժանդակ ծառայությունների մատուցում.
- մանրածախ առևտուր կրպակներից, տաղավարներից և շուկաներից դուրս.
- բուսաբանական այգիների գործունեություն.
- բուսաբանական այգիների տարածքում բնակչությանը վճարովի ծառայությունների մատուցում՝ այցելուների սննդի կազմակերպում՝ պատրաստի սննդի, ոչ ալկոհոլային խմիչքների, զտված և հանքային ջրերի տրամադրում, հեծանիվների վարձույթի տրամադրում և այլն.
- միջոցառումների կազմակերպում՝ էքսկուրսիաներ, մարզական, առողջ

ապրելակերպի միջոցառումներ և կրթության բնագավառում այլ օժանդակ գործունեության իրականացում.

- ֆիլմերի, ֆոտոսեսիաների և նմանաբովանդակ նախաձեռնություններով լուսանկարահանման կազմակերպում և տարածքի տրամադրում.
- հուշանվերների և այլ արտադրանքի վաճառք և վերավաճառք.
- հանգստի կազմակերպման ապահովման նպատակով մանրածախ առևտրի իրականացում, այդ թվում առևտրային իրավաբանական անձի հիմնադրմամբ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան